

## Հարգելի դիմորդներ

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.** խնդրում ենք հաշվի առնել, որ սույն հուշաթերթիկը միայն ընդհանուր ցուցումներ է տրամադրում, բայց ոչ մանրամասն տեղեկատվություն: Յուրաքանչյուր ծրագրին դիմելիս խնդրում ենք ուղղորդվել համապատասխան ծրագրի էջում տեղադրված նկարագրով և փաստաթղթերի ցանկով:

### Ծրագրին դիմելու ընթացակարգը

Փաստաթղթերը հանձնելուց առաջ խնդրում ենք ուշադիր ընթերցել հետևյալ թերթիկը:

Խնդրում ենք ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ թերի լրացված կամ ոչ լիարժեք ներկայացված փաստաթղթերը չեն կարող դիտարկվել DAAD-ի կողմից: Փաստաթղթերի ամփոփիչ տարբերակները հարկավոր է ներկայացնել առանց ամրակների, միակողմանի տպած՝ ըստ ստորև բերված հերթականության:

- Գրանցվել DAAD պորտալում, ընտրել համապատասխան կրթաթոշակային ծրագիրը, բեռնել և լրացնել առաջարկվող հարցաթերթիկը
- Հերթականությամբ վերբեռնել բոլոր պահանջվող փաստաթղթերը, հարցաթերթիկի հետ միասին: Փաստաթղթերի թարգմանված լինելու դեպքում DAAD Ձեր պորտալ պետք է վերբեռնել հայերեն օրինակը՝ թարգմանության հետ միասին:
- Հարցաթերթիկը լրացնելուց և պահանջվող փաստաթղթերը վերբեռնելուց հետո սեղմել “ուղարկել” (send/senden) կոճակը:
- 48 ժամվա ընթացքում պորտալի միջոցով Դուք կստանաք Ձեր փաստաթղթերի ամփոփիչ տարբերակը (Application summary/ Bewerbungszusammenfassung):
- Տպեք այն երեք օրինակ (մագիստրոսական ծրագրեր) և կախված համապատասխան ծրագրի պահանջներից ներկայացրեք երաշխավորագիր-նամակի հետ միասին DAAD գրասենյակ:

### Պահանջվող փաստաթղթերը վերբեռնեք հետևյալ հերթականությամբ

1. Լրացված հարցաթերթիկ (Application summary/ Bewerbungsformular)
2. Ինքնակենսագրություն/ CV
3. Հիմնավորագիր նամակ կամ որոշ ծրագրերի դեպքում հետազոտական աշխատանքի համառոտագիր: Հիմնավորագիր և ինքնակենսագրություն գրելու չափանիշները կարող եք գտնել DAAD ինտերնետային կայքում համապատասխան կետի տակ
4. Հրավեր գերմանացի պրոֆեսորի կողմից (միայն հետազոտական կրթաթոշակների և ատենախոսության պաշտպանության համար/մյուս բոլոր ծրագրերին սա չի վերաբերում)
5. Ընտրված կուրսերի կամ ուսումնական ծրագրերի վերաբերյալ տեղեկություն՝ համապատասխան DAAD հարցաթերթիկի վրա, յուրաքանչյուր համալսարանի համար առանձին, հարցաթերթիկի ձևը կարող եք նայել մեր ինտերնետային կայքում/ սա վերաբերում

Ե միայն մագիստրոսական և ասպիրանտական կրթաթոշակներին և Նախընտրելի Է, որ ուսումնական վճարը ընտրված մասնագիտության չգերազանցի կիսամյակի համար 500 եվրոն: Նախընտրելի Է նշել երկու կամ երեք տարբեր համասարաններ, որտեղ դիմորդը կցանական շարունակել կրթությունը/:

6. Հասունության վկայական / ատեստատ/ և դրա թարգմանությունը՝ թարգմանված լիցենզավորված թարգմանչի կողմից

7. Բուհական դիպլոմները (հավելվածներով) կամ ակադեմիական տեղեկանքները և դրանց համապատասխան թարգմանություններ՝ թարգմանված լիցենզավորված թարգմանչի կողմից:

8. Լեզվի իմացության վկայական, որը պահանջվում է Նախընտրած բուհի կողմից (որոշ բուհեր պահանջում են և՛ գերմաներենի և՛ անգլերենի իմացություն): Եթե դիմելու պահին առկա չէ անգլերեն կամ գերմաներեն լեզվի ճանաչված վկայական (անգլերենի իմացության համար – Toefl IBT, IELTS և ցերմաներենի իմացության համար – Test DaF, DSH), ապա դիմորդը կարող է մասնակցել DAAD-ի կողմից կազմակերպվող թեստերին (onDaf/onSet): Նշված թեստերը տեղի են ունենում փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետից մի քանի օր հետո: Մանրամասն տեղեկություններ թեստերի վերաբերյալ Դուք կարող եք ստանալ DAAD գրասենյակում: Թեստերի համար նախատեսված TAN կոդերը կտրամադրվեն գրասենյակի կողմից: Քննությունը DAAD-ի դիմորդների համար անվճար է:

9. Վկայականներ (եթե առկա են) / սեմինարներ, կոնֆերանսներ, բարեգործական գործունեություն, վերապատրաստում և այլն/

10. Բժշկական օրդինատորները պետք է ներկայացնեն տեղեկանք օրդինատուրայի կրթության վերաբերյալ / սա վերաբերում է միայն բժշկական կրթությանը/

11. Ամառային դասընթացներին դիմելու համար նույնպես պարտադիր է ներկայացնել տեղեկանք դիմորդի կարգավիճակի վերաբերյալ /բակալավր, մագիստր, օրդինատոր/

12. Մեկ երաշխավորագիր-նամակ՝ կախված կրթաթոշակային ծրագրի պահանջներից:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.** մասնագետ դասախոսի կողմից տրված երաշխավորագիր նամակը միակ փաստաթուղթն է, որը չի կարելի վերբեռնել DAAD պորտալ: Դա հատուկ ձևաթուղթ է, որը հարկավոր է ներբեռնել պորտալից (Request for letter of recommendation/ Gutachten anfordern բաժանմունքներից), տրամադրել այն մասնագետ-դասախոսին, որպեսզի նա լրացնի այն, տպի մեկ օրինակ, կնքի կամ ստորագրի այն, այնուհետև տեղադրելով փակ ծրարի մեջ՝ վերադարձնի դիմորդին: Փակ ծրարը և փաստաթղթերի ամփոփիչ տարբերակը դիմորդը ներկայացնում է DAAD գրասենյակ: